ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը օգոստոսի 2020 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 24-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
   2) «Բարեկարգ Վաղաշեն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին.
   3) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վարձավճարներ սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը օգոստոսի 2020 թվականի N 32-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և Վաղաշենի համայնքապետարանի միջև 2020թ. հուլիսի 24-ին կնքված N1198-01 կապիտալ սուբվեցիայի հատկացման պայմանագիրը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեի եկամուտներն ավելացնել 73043.1 հազար դրամով՝ պետական բյուջեից տրամադրվող կապիտալ ծախսեր, այն ուղղել համայնքի ֆոնդային բյուջեի 9.1.1.51 գործառնական դասակարգման (նախադպրոցական կրթություն) 5113 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում)՝ Վաղաշեն համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման, սեյսմազինվածության բարձրացման, բակային մասի բարեկարգման և պարսպապատման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական բյուջեի եկամուտներն պակասեցնել 1460.0 հազար դրամով՝ տեղական վճարներ (համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար), այն պակասեցնել համայնքի վարչական բյուջեի 5.1.1.51 գործառնական դասակարգման (աղբահանում) 4213 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (կոմունալ ծառայություններ)՝ 500. հազար դրամ և 4511 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին)՝ 960.0 հազար դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական բյուջեի 4.2.4.57 գործառնական դասակարգման (ոռոգում) 4213 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (կոմունալ ծառայություններ) պակասեցնել (կրճատել) 2000.0 հազար դրամ, այն ավելացնել 4.2.4.57 գործառնական դասակարգման (ոռոգում) 4511 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին)՝ «Բարեկարգ Վաղաշեն» ՀՈԱԿ-ին ֆինանսավորելու նպատակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱՋՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը օգոստոսի 2020 թվականի N 33-Ա

«ԲԱՐԵԿԱՐԳ ՎԱՂԱՇԵՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացման շրջանակներում ձեռքբերված CASE 570ST մակնիշի բազմաֆունկցիոնալ ամբարձիչ էքսկավատորը (արտադրման տարեթիվը՝ 2020թ., պետական համարանիշը՝ 5537LS)՝ 33500.0 հազար դրամ հաշվեկշռային արժեքով, անհատույց օգտագործման իրավունքով անորոշ ժամկետով տրամադրել «Բարեկարգ Վաղաշեն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը օգոստոսի 2020 թվականի N 34-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել համայնքի սեփականություն հանդիսացող և անհատույց օգտագործման իրավունքով «Բարեկարգ Վաղաշեն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված CASE 570ST բազմաֆունկցիոնալ ամբարձիչ էքսկավատորով մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետևյալ դրույքաչափերը՝
   1.1. Յուրաքանչյուր 1 ժամի համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև ծախսված վառելանյութը.
   1.2. 1 ժամից պակաս աշխատելու (օգտագործելու) դեպքում սահմանել 1 լրիվ ժամի արժեք, ինչպես նաև ծախսված վառելանյութը.
   1.3. Համայնքի տարածքում հանգուցյալի հուղարկավորության տեղը փորելու համար՝ միայն ծախսված վառելանյութը.
   1.4. Համայնքում բարեգործական և հասարակական աշխատանքներ կատարելու համար՝ միայն ծախսված վառելանյութը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱՋԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**